



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

3301թ. Կապան, Գ. Նժդեհի 1, հեռ. Ֆաքս (010) 287822 (0285) 52010, էլ-հասցե՝ syunik@mta.gov.am

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՈՒՂԵՐՁԸ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Հարգելի գործընկերներ

Սրտանց շնորհավորում եմ համայնքների ղեկավարներին, ավագանիների անդամներին, համայնքային ծառայողներին և տեղական ինքնակառավարման համակարգի մյուս ներկայացուցիչներին տեղական ինքնակառավարման օրվա կապակցությամբ:

Որպես տեղական ինքնակառավարման համակարգին մոտ կանգնած և նրա հոգսերով ու խնդիրներով ապրող պաշտոնյա, կարող եմ փաստել, որ այս 19 տարիների ընթացքում Հայաստանում ձևավորված տեղական ինքնակառավարման համակարգն ընդգծված դերակատարություն ունի մեր նորանկախ պետականության կայացման ու ամրապնդման գործում և տարիների փորձով ապացուցել է իր պահանջվածությունը:

Համակարգի կայացման և նրա արդյունավետության բարձրացման կարևոր գործոններից է համայնքների բնակչության ակտիվ մասնակցությունը տեղերում ընդունվող որոշումների կայացմանը և իրականացմանը:

Համայնքների խնդիրները մշտապես գտնվում են երկրի իշխանությունների, իսկ Սյունիքի մարզի համայնքներինը՝ նաև մարզպետարանի ուշադրության կենտրոնում և տարեցտարի լուծում են ստանում:

Վստահորեն կարող եմ նշել, որ համակարգի կայացման գործում իր զգալի ներդրումն է ունեցել նաև Հայոց պետականության հենասյուներից մեկը հանդիսացող Սյունիքն՝ իր համայնքներով:

Ներկայումս շրջանառվող սահմանադրական փոփոխությունների նախագծում ներառված են նաև տեղական ինքնակառավարման համակարգի ամրապնդմանն առնչվող բարեփոխումներ: Այս և նախատեսվող վարչատարածքային բարեփոխումները նոր խթան կհանդիսանան համակարգի հետագա զարգացման գործում:

Կրկին շնորհավորում եմ բոլորին տոնական օրվա առիթով և ցանկանում արդյունավետ աշխատանք ու նորանոր ձեռքբերումներ:

Ս. ԽԱՀՆԱՏՐՅԱՆ

10 նոյեմբերի 2015թ. թ. Կապան